



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

27.12.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/73

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.12.2017թ. թիվ 26-3/22584-17 գրությամբ «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 02627826/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի 04.12.2017թ. թիվ 01/29-1368 և 05.12.2017թ. թիվ 01/29-1373 գրությունների հիման վրա, 06.12.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 04.12.2017թ. թիվ 01/29-1368 և 05.12.2017թ. թիվ 01/29-1373 գրություններով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից 21.11.2017թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն կազմակերպված ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-17/33 ծածկագրով գնանշման ընթացակարգի 4-րդ, 7-րդ, 8-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ և 19-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ն: 30.11.2017թ. ՀՀ ՊԵԿ-ի կողմից ստացված բացասական եզրակացության հիման վրա 01.12.2017թ. ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-17/33 ծածկագրով գնանշման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը»:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ն 19.12.2017թ. Խորհրդին ուղղված գրությամբ ներկայացրել է առարկություններ՝ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ: Մասնավորապես, Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Գտնում ենք, որ առկա չեն հիմքեր ընկերությանը ցուցակում ներառելու համար հետևյալ պատճառաբանությամբ.

1. «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ն 28.11.2017թ. հայտ է ներկայացրել և մասնակցել է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ պատվիրատու) կողմից հայտարարված «ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-17/33» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերի 7-րդ մասի 7.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ նույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

3. «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 849,500 ՀՀ դրամ ($849,500 * 5 = 42,475$):

4. Ընկերությունը թիվ 10 հավելվածին կից ներկայացրած վճարման պահանջագրի 12-րդ տողում որպես հայտի ապահովման գումար նշել է 27,475 ՀՀ դրամ ($849,500 * 3,2 = 27,184$), այսինքն, ներկայացված հայտի ապահովման գումարը կազմել է ներկայացված գնի առաջարկի ոչ թե 5, այլ 3,2 տոկոսը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.11.2017թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ մասնակիցների հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, ինչի արդյունքում ընկերությունը մի քանի չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև օրենք) 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների

թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ նաև կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«ՀՊՏՀ-ԳՀԱՊԶԲ-17/33» ծածկագրով ընթացակարգի հրավերի 7-րդ մասի 7.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ նույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակից «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 849,500 ՀՀ դրամ ($849,500 * 5 = 42,475$): Միևնույն ժամանակ ընկերությունը թիվ 10 հավելվածին կից ներկայացրած վճարման պահանջագրի 12-րդ տողում որպես հայտի ապահովման գումար նշել է 27,475 ՀՀ դրամ ($849,500 * 3,2 = 27,184$), այսինքն ներկայացված հայտի ապահովման գումարը կազմել է ներկայացված գնի առաջարկի ոչ թե 5, այլ 3,2 տոկոսը:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ ընկերության կողմից նշված հայտի ապահովման չափը, որը նշվել է 27,475 ՀՀ դրամ, պակաս է ընկերության կողմից ներկայացված գնի առաջարկի հինգ տոկոսից, մինչդեռ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի

1-ին կետը սահմանում է, որ հայտի ապահովման չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին, իսկ ընթացակարգի հրավերի 7-րդ մասի 7.1 կետով սահմանվել է, որ հայտի ապահովման չափը հավասար է հայտով առաջարկվող գնի հինգ տոկոսին:

Ելնելով վերոգրյալ իրավական և փաստական հիմքերից, ընկերությունը գտնում է, որ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի «ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-17/33» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ընկերության հայտը բավարար գնահատելով՝ գործել է ոչ իրավաչափ՝ չպահպանվելով օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով և 41-րդ կետով սահմանված պահանջները, և վերոհիշյալ խախտմամբ իրականացված ընթացակարգի արդյունքում «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար բավարար հիմքեր առկա չեն, քանի որ պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, ընկերության հայտը մերժելու արդյունքում, չէին կարող ի հայտ գալ Պատվիրատուի կողմից արձանագրված խախտումները»:

Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Ռաֆայել Մկրտչյանը:

4. ՍՑ-ԷՍ-2017/73 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.12.2017թ. թիվ 26-3/22584-17 գրությունը և կից փաստաթղթերը, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 04.12.2017թ. թիվ 01/29-1368 և 05.12.2017թ. թիվ 01/29-1373 գրությունները, «ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-17/33» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը, «ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-17/33» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 28.11.2017թ. նիստի թիվ 2, և 01.12.2017թ. նիստի թիվ 3 արձանագրությունները, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին

(այսուհետ՝ նաև Կոմիտե) 28.11.2017թ. կատարված հարցումը և Կոմիտեի կողմից 30.11.2017թ. ներկայացված եզրակացությունը, «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի 19.12.2017թ. Խորհրդին ուղղված գրությունը.

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար շինանյութի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-17/33» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-17/33» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովի 28.11.2017թ. կայացած նիստի N 2 արձանագրությամբ արձանագրել է, որ Ընկերության հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, և որոշել է ընթացակարգի 4-րդ, 7-րդ, 8-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ և 19-րդ չափաբաժինների մասով «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ին ճանաչել որպես առաջին տեղն զբաղեցրած մասնակից:

Նույն օրը Հանձնաժողովը Կոմիտեին ուղարկել է հարցում՝ խնդրելով տարամադրել «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի՝ 28.11.2017թ. դրությամբ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված տվյալների վերաբերյալ տեղեկատվություն:

Կոմիտեի կողմից 30.11.2017թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 491,000 ՀՀ դրամի չափով:

«ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-17/33» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նվազագույն գնային առաջարկը կազմել է 2,600 ՀՀ

դրամ (16-րդ չափաբաժնի համար), իսկ Ընթացակարգի շրջանակներում Ընկերության հայտով առաջարկվող գների հանրագումարը կազմել է 849,500 ՀՀ դրամ:

01.12.2017թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է 4-րդ, 7-րդ, 8-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ և 19-րդ չափաբաժինների մասով որպես առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչված «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ 491,000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու հիմնավորմամբ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

- 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին

տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խրոհիրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում նույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար «ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-17/33» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

- 7.1 կետի համաձայն՝ Մասնակիցը հայտով՝ նույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

- 8.12 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև նույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

- 8.14 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 8.12 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում նույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում

տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստին Ընկերության ներկայացուցիչը Խորհրդին է հայտնել նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ Ընկերության առարկությունները: Մասնավորապես, ըստ վերջինիս, Ընկերությունը որպես ներկայացված հայտի ապահովման գումար նշել է 27,475 ՀՀ դրամը, ինչը կազմում է Ընթացակարգի շրջանակներում Ընկերության հայտով առաջարկվող գների հանրագումարի ոչ թե 5, այլ 3,2 տոկոսը, ինչը չի համապատասխանում Հրավերի 7.1 կետով սահմանված պահանջին:

Ընկերության ներկայացուցիչը հավելեց, որ Հանձնաժողովը՝ Ընկերության հայտը բավարար գնահատելով՝ գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով և 41-րդ կետով սահմանված պահանջները, որպիսի պայմաններում «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար բավարար հիմքեր առկա չեն, քանի որ, եթե Հանձնաժողովի կողմից պահպանվեին գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, ապա Ընկերության հայտը վերջինիս կողմից կմերժվեր, ինչի արդյունքում ի հայտ չէր գա Ընկերությանը վերագրվող խախտումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,

երթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

- 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին:

- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա՝ 28.11.2017թ. դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով՝ Ընկերության կողմից ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը գերազանցող ժամկետանց պարտավորություն:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Ընկերությունը որպես ներկայացված հայտի ապահովման գումար տուժանքի մասին համաձայնագրին կից վճարման պահանջագրում նշել է 27,475 ՀՀ դրամը, ինչը կազմում է Ընթացակարգի շրջանակներում Ընկերության հայտով առաջարկվող գների հանրագումարի 3,2 տոկոսը:

Խորհուրդը գտնում է, որ «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված տուժանքի մասին համաձայնագրին կից վճարման պահանջագրի 12-րդ կետով նշված

գումարը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով նախատեսված հայտի ապահովման չափին:

Խորհուրդը գտնում է նաև, որ Հանձնաժողովը՝ բավարար գնահատելով «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի հայտը, գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով, ինչպես նաև Հրավերի 7.1 կետով նախատեսված պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.12.2017թ. «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 02627826/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ